

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

3.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ (ԱՐՄՍՏԱՏ)

h/h	Ժողովածուի ծածկագիրը	Ժողովածուի անվանումը	Հրատարակման տարբերակ	Հրատարակման տեսակ	Թողարկման (հրատարակման) ժամկետ	Համառոտ բովանդակություն
3.1.1. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ						
1	1000-101	Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2021	հայերեն, ռուսերեն, անգլերեն	էլեկտրոնային	նոյեմբեր	Այն Արմատատի առավել ամբողջական վիճակագրական հրատարակումն է, որում արտացոլվելու է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը 2016-2020թթ.: Ներառվելու են երկրի ողջ տնտեսության, տնտեսական գործունեության կարևորագույն տեսակների և տնտեսության հատվածների վիճակը բնութագրող շուրջ 370 աղյուսակ, բազմաթիվ գծապատկերներ և 20-ից ավելի քարտեզային պատկերներ, մեթոդաբանական պարզաբանումներ: Որոշ ցուցանիշներ ներկայացվելու են նաև ՀՀ մարզերի և Երևան քաղաքի կտրվածքով: Առանձին հատվածով զետեղվելու են միջազգային համեմատություններ: Տարեգիրքը հրատարակվելու է Adobe Acrobat (.pdf.) ձևաչափով:
2	1000-102	Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	նոյեմբեր	Այն Արմատատի տարածաշրջանային (ռեգիոնալ) ամբողջական վիճակագրական հրատարակումն է, որն արտացոլելու է ՀՀ մարզերի և ք.Երևանի 2016-2020թթ. սոցիալ-տնտեսական վիճակը: Հրատարակումն ընդգրկելու է շուրջ 270 աղյուսակ, 20 գծապատկեր և 20 քարտեզ: Ժողովածուն բաժանվելու է երկու հատվածների՝ առաջինում ներկայացվելու են ք. Երևանի և ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշները, իսկ երկրորդում՝ մայրաքաղաքի և յուրաքանչյուր մարզի աշխարհագրական բնութագիրը, ժողովրդագրական, մանրածախ առևտրի, սոցիալական ոլորտի, ինչպես նաև քաղաքների ու գյուղերի մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ ցուցանիշներ: Այն հրատարակվելու է MS Word, MS Excel, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:

2021 թվականի վիճակագրական ծրագրի

h/h	Ժողովածուի ծածկագիրը	Ժողովածուի անվանումը	Հրատարակման տարբերակ	Հրատարակման տեսակ	Թողարկման (հրատարակման) ժամկետ	Համառոտ բովանդակություն
3	1000-103	Հայաստանը թվերով, 2021	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	նոյեմբեր	<p>Սույն հակիրճ գրքույկը ներառելու է վիճակագրական տեղեկատվություն երկրի 2020թ. սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ՝ նախորդ տարիների համեմատությամբ: Այն ընդգրկելու է վիճակագրական ցուցանիշներ ժողովրդագրական գործընթացների, աշխատանքի շուկայի, սոցիալական ոլորտի, բնակչության կենսամակարդակի, ներքին առևտրի, ֆինանսական վիճակի, արտաքին տնտեսական գործունեության վերաբերյալ: Առանձին հատվածով ներկայացվելու են ՀՀ մարզերը և Երևան քաղաքը բնութագրող հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները: Գրքույկում ներառվելու է նաև միջազգային համեմատություններ հատվածը: Որոշ բաժիններ համալրվելու են նոր աղյուսակային նյութերով: Նախկինում հրատարակված որոշ ցուցանիշներ ճշգրտվելու են: Այն հրատարակվելու է MS Word, MS Excel, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:</p>
4	1000-104	Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2021	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	նոյեմբեր	<p>Սույն վիճակագրական ժողովածուն ներկայացնելու է վիճակագրական տեղեկատվություն ՀՀ հասարակական կյանքում կին-տղամարդ հարաբերակցությունների վերաբերյալ: Այն հիմնականում ներառելու է 2015-2020թթ. շարժընթացը: Ժողովածուի շուրջ 70 աղյուսակներում և 90 գծապատկերներում արտացոլվելու են կանանց և տղամարդկանց թվաքանակը բացարձակ թվերով և համամասնություններն ըստ որոշակի հատկանիշների: Այն հրատարակվելու է MS Word, MS Excel, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:</p>
5	1000-105	<p>Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ առանձին (թվով 11 անուն) հրատարակումներ</p> <p>Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը թվերով, 2021</p> <p>Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզը թվերով, 2021</p> <p>Հայաստանի Հանրապետության Արարատի մարզը թվերով, 2021</p> <p>Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզը թվերով, 2021</p>	հայերեն	էլեկտրոնային	նոյեմբեր	<p>Սույն ժողովածուներն առանձին-առանձին ներկայացնելու են ՀՀ յուրաքանչյուր մարզի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող 2016-2020թթ. հիմնական ցուցանիշները: Ժողովածուները հրատարակվելու են Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:</p>

2021 թվականի վիճակագրական ծրագրի

h/h	Ժողովածուի ծածկագիրը	Ժողովածուի անվանումը	Հրատարակման տարբերակ	Հրատարակման տեսակ	Թողարկման (հրատարակման) ժամկետ	Համառոտ բովանդակություն
		Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզը թվերով, 2021 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզը թվերով, 2021 Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզը թվերով, 2021 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզը թվերով, 2021 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզը թվերով, 2021 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզը թվերով, 2021 Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզը թվերով, 2021				
6	1000-106	Վիճակագրություն դպրոցականների համար, 2021	հայերեն	Էլեկտրոնային	նոյեմբեր	Արմատատը նախաձեռնել է սույն գրքույկի հրատարակումը՝ նպատակ ունենալով վիճակագրությունը հասանելի դարձնել նաև դպրոցահասակներին և հանրակրթությանը: Գրքույկը հնարավորինս հակիրճ, առավել մատչելի, ընդհանուր պատկերացումներով ու նկարագրումներով տեղեկատվություն է ներկայացնում «վիճակագրության», «տվյալների» և երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ:
7	1100-101	Հայաստանի ազգային հաշիվներ, 2021	հայերեն, անգլերեն	Էլեկտրոնային	նոյեմբեր	Սույն ժողովածուն ներկայացնում է Հայաստանի ազգային հաշիվների համակարգի, ինչպես նաև դրա հետ կապված մոդելների և ցուցանիշների առավել ամբողջական հրատարակումը: Ժողովածուն պարունակելու է տեղեկություններ 2017-2020թթ. Հայաստանի ազգային հաշիվների համակարգի հիմնական հաշիվների և ցուցանիշների վերաբերյալ՝ ինչպես ըստ ընդհանուր տնտեսության, այնպես էլ ըստ տնտեսության կառուցվածքային հատվածների: Այն ընդգրկելու է տեղեկություններ ՀՆԱ-ի արտադրության, կառուցվածքի, ծավալի ինդեքսի, ձևավորման աղբյուրների և ծախսային բաղադրիչների վերաբերյալ: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, MS Excel, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:

2021 թվականի վիճակագրական ծրագրի

h/h	Ժողովածուի ծածկագիրը	Ժողովածուի անվանումը	Հրատարակման տարբերակ	Հրատարակման տեսակ	Թողարկման (հրատարակման) ժամկետ	Համառոտ բովանդակություն
8	1300-101	Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2021	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	սեպտեմբեր	Ժողովածուն պարունակելու է վիճակագրական տեղեկություններ տնտեսության տարբեր ոլորտների 2016-2020թթ. գների և գների ինդեքսների վերաբերյալ: Առանձին ցուցանիշների գծով ներկայացվելու են նաև միջազգային համադրումներ և համեմատություններ: Տեղեկատվությունը ներկայացվելու է ինչպես ըստ հանրապետության, այնպես էլ ըստ մարզերի (դիտարկվող բնակավայրերի) և ք. Երևանի, տնտեսության տարբեր հատվածների, ապրանքային խմբերի և ապրանք-ծառայության տեսակների: Այն հրատարակվելու է MS Word, MS Excel, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:
9	1400-101	Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2021	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	դեկտեմբեր	Սույն վիճակագրական ժողովածուն պարունակելու է աշխատաշուկայի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշների 2016-2020թթ. Ժամանակագրական շարքեր, որոնք ընդգրկելու են տնտեսական գործունեության տարբեր ոլորտներում զբաղվածների, զբաղվածություն չհամարվող աշխատանքային գործունեության այլ ձևերում ընդգրկված բնակչության, գործազուրկների, աշխատուժի և աշխատուժից դուրս բնակչության վերաբերյալ հիմնական ցուցանիշներ (ըստ սեռի, տարիքի, կրթական մակարդակի, վարձու աշխատողների աշխատավարձի, աշխատուժի գնի, աշխատուժի գնի եռամսյակային ինդեքսի և աշխատանքի շուկան բնութագրող այլ ցուցանիշներ), ինչպես նաև համառոտ մեթոդաբանական պարզաբանումներ: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat(.pdf.) ձևաչափերով:
10	2000-101	Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2021	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	հոկտեմբեր	Սույն ժողովածուն ընդգրկելու է վիճակագրական տեղեկություններ 2016-2020թթ. պետական ֆինանսների, կազմակերպությունների ֆինանսների, դրամավարկային և բանկային համակարգը բնութագրող տվյալների, արտարժույթների փոխարժեքների, ապահովագրական ընկերությունների, արժեթղթերի շուկայի և այլ ֆինանսական կազմակերպությունների ամփոփ ցուցանիշների վերաբերյալ: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:

2021 թվականի վիճակագրական ծրագրի

h/h	Ժողովածուի ծածկագիրը	Ժողովածուի անվանումը	Հրատարակման տարբերակ	Հրատարակման տեսակ	Թողարկման (հրատարակման) ժամկետ	Համառոտ բովանդակություն
11	5100-101	Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	դեկտեմբեր	Արմստատի սույն ժողովածուն պարունակելու է ՀՀ բնակչության թվաքանակի փոփոխությունը բնութագրող հիմնական ցուցանիշներ, հնչյուն նաև երկրի ժողովրդագրական իրավիճակի ամփոփ նկարագիրը 2020թ.-ին նախորդ տարիների համեմատության մեջ: Առանձին բաժիններով ներկայացվելու են տեղեկություններ բնակչության թվաքանակի, սեռատարիքային կառուցվածքի, բնակչության բնական շարժի, միգրացիոն տեղաշարժերի, մահացության և ծնելիության, ամուսնության և ամուսնալուծության, ՀՀ մարզերի տարածքների մակերեսի, դրանցում համայնքների և բնակավայրերի քանակի և մարզերում բնակչության թվաքանակի վերաբերյալ: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:
12	5200-101	Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2020 թվականին	հայերեն	էլեկտրոնային	սեպտեմբեր	Արմստատի սույն վիճակագրական ժողովածուն արտացոլելու է ՀՀ 2020 թվականի սոցիալական վիճակը բնութագրող ամփոփ տվյալներ: Այն պարունակելու է տեղեկություններ սոցիալական ոլորտի առողջապահության, կրթության, իրավական համակարգի, մշակույթի, սպորտի, հրատարակչական գործունեության, գրադարանային ֆոնդի օգտագործման և այլ ոլորտների վերաբերյալ: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:
13	5600-101	Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին	հայերեն, անգլերեն	էլեկտրոնային	հոկտեմբեր	Արմստատի սույն ժողովածուն ներառելու է վիճակագրական տեղեկություններ երկրում շրջակա միջավայրի, բնական պաշարների, դրանց օգտագործման վերաբերյալ: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:
14	5700-101	Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2020 թվականին	հայերեն	էլեկտրոնային	հոկտեմբեր	Արմստատի սույն ժողովածուն ներկայացնելու է ՀՀ բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսության գործունեությունը բնութագրող ամփոփ տվյալների շարժընթացը: Ժողովածուն ներառելու է բնակարանային ֆոնդ, բնակապահովվածություն, անշարժ գույքի շուկա, ջրամատակարարում, ջրահեռացում, գազաֆիկացում, քաղաքային բնակավայրերի սանմաքրում և բարեկարգվածություն բաժինները: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:
15	5800-101	Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021 (վիճակագրական-վերլուծական զեկույց)	հայերեն	էլեկտրոնային	սեպտեմբեր	Սույն ժողովածուն ընդգրկելու է Արմստատի կողմից իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքները: Ժողովածուի հիմքը Արմստատի կողմից 2020թ. իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունն է: Ժողովածուն հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:
16	5800-102	Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021 (վիճակագրական-վերլուծական զեկույց)	անգլերեն	էլեկտրոնային	սեպտեմբեր	Սույն ժողովածուն նույնական է (իդենտիկ) հայերեն ժողովածուին և հրատարակվելու է MS Word, Adobe Acrobat (.pdf.) ձևաչափերով:

h/h	Տեղեկագրի ծածկագիրը	Տեղեկագրի անվանումը	Հրապարակման տարբերակ	Հաճախականությունը	Հրապարակման ժամկետը (ամսաթիվը կամ օրը հաշվելու ժամանակաշրջանից հետո)	Հրապարակման տեսակը
3.1.2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐ						
1	1000-201	2021 թվականի վիճակագրական հրապարակումների համացանկ	հայերեն, անգլերեն	տարեկան	հունվար	էլեկտրոնային
2	1000-202	Լրատու	հայերեն	2 ամիսը մեկ անգամ	20	էլեկտրոնային
3	1000-203	Ազգային ամփոփ տվյալների էջ	անգլերեն	օրական, ամսական, եռամսյակային	օրական, ամսական, եռամսյակային	էլեկտրոնային
4	1000-204	«Ատլաս» Հայաստանի Հանրապետությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի (2020 թվականի ցուցանիշներ)	հայերեն, ռուսերեն, անգլերեն	տարեկան	դեկտեմբեր	էլեկտրոնային
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ						
1	1210-201	Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 2-նիշ դասակարգման	հայերեն	ամսական	35/36	էլեկտրոնային
2	1210-202	Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ	հայերեն	ամսական, տարեկան	35/36, օգոստոս	էլեկտրոնային
3	1210-203	Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 2-նիշ դասակարգման, ըստ մարզերի և Երևան քաղաքի	հայերեն	եռամսյակային, տարեկան	35/36, օգոստոս	էլեկտրոնային
4	1210-204	Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության 5-անիշ դասակարգման	հայերեն	կիսամյակային, տարեկան	35/36, օգոստոս	էլեկտրոնային
5	1210-205	Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի և տնտեսական գործունեության 2-նիշ դասակարգման	հայերեն	տարեկան	օգոստոս	էլեկտրոնային
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ						
1	1220-202	Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները	հայերեն, անգլերեն	տարեկան	մարտ	էլեկտրոնային
2	1220-203	Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը	հայերեն, անգլերեն	տարեկան	մարտ	էլեկտրոնային

2021 թվականի վիճակագրական ծրագրի

h/h	Տեղեկագրի ծածկագիրը	Տեղեկագրի անվանումը	Հրապարակման տարբերակ	Հաճախականությունը	Հրապարակման ժամկետը (ամսաթիվը կամ օրը հաշվետու ժամանակաշրջանից հետո)	Հրապարակման տեսակը
		և միջին բերքատվությունը				
3	1220-204	Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից	հայերեն, անգլերեն	տարեկան	ապրիլ	Էլեկտրոնային
4	1220-205	2021 թվականի բերքի տակ կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի համատարած հաշվառման հանրագումարները	հայերեն, անգլերեն	տարեկան	օգոստոս	Էլեկտրոնային
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ						
1	1230-201	Շինարարությունը Հայաստանի Հանրապետությունում	հայերեն	եռամսյակային	35/36	Էլեկտրոնային
ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ						
1	1300-201	Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում	հայերեն, անգլերեն	ամսական, տարեկան	8-րդ աշխատանքային օրը, 25 հունվարի	Էլեկտրոնային
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ						
1	1900-101	Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում	հայերեն, անգլերեն	տարեկան	դեկտեմբեր	Էլեկտրոնային
ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ						
1	5100-201	Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2021 թվականի. հունվարի 1-ի դրությամբ ապրիլի 1-ի դրությամբ հուլիսի 1-ի դրությամբ հոկտեմբերի 1-ի դրությամբ	հայերեն	Տարեկան, եռամսյակային	6 մայիսի, 65/66, 35/36, 35/36	Էլեկտրոնային, թղթային
2	5600-201	Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2020 թվականին և ցուցանիշների 2016-2020թթ. շարժընթացը	հայերեն, անգլերեն	տարեկան	հոկտեմբեր	Էլեկտրոնային
ՊԱՐԵՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ						
1	5900-201	Պարենային ապահովություն և աղքատություն	հայերեն, անգլերեն	եռամսյակային	55	Էլեկտրոնային, թղթային

2021 թվականի վիճակագրական ծրագրի

h/h	Ծածկագիրը	Թեմայի անվանումը	Հաճախականությունը	Հրապարակման ժամկետը (ամսաթիվը կամ օրը հաշվեփուլի ժամանակաշրջանից հետո)	Հրապարակման տեսակը
3.1.3. ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
1	1000-301	Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները	ամսական	25 (2020 թվականի դեկտեմբերը՝ փետրվարի 1-ին)	Էլեկտրոնային
2	1000-302	Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր	եռամսյակային	«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի հրապարակումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում	Էլեկտրոնային
3	1000-303	Թեմատիկ հաղորդագրություններ	ըստ անհրաժեշտության		Էլեկտրոնային, թղթային
4	1100-304	Համախառն ներքին արդյունքն արտադրական եղանակով՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների և ծախսային (եկամուտների օգտագործման) եղանակով ըստ ծախսային բաղադրիչների	եռամսյակային	51/53	Էլեկտրոնային
5	1300-305	Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը	ամսական	3-րդ աշխատանքային օրը (2020 թվականի դեկտեմբերը՝ հունվարի 14-ին)	Էլեկտրոնային
6	5100-306	Նորածիններին ավելի հաճախ տրվող անուններն ըստ սեռի	ըստ անհրաժեշտության	փետրվար, մայիս, օգոստոս	Էլեկտրոնային, թղթային
7	5100-307	Ծնվածների շրջանում առավել տարածված ազգանուններն ըստ սեռի	ըստ անհրաժեշտության	մայիս	Էլեկտրոնային, թղթային
8	5800-308	Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021	տարեկան	սեպտեմբեր	Էլեկտրոնային, թղթային

h/h	Ծածկագիրը	Տեղեկատվական ամսական զեկույցի անվանումը	Հաճախականությունը	Հրապարակման ժամկետը (ամսաթիվը կամ օրը հաշվեփուլի ժամանակաշրջանից հետո)	Հրապարակման տեսակը
3.1.4. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՍԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ					
1	1000-401	«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», հայերեն տարբերակ	ամսական	35/36	Էլեկտրոնային, թղթային
2	1000-402	«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը», ռուսերեն տարբերակ	ամսական	40/41	Էլեկտրոնային